Աղթամարցին, ուրեմն և նախագաբարյան մի որինակ կեչառեցու, Աղթամարցու և ավելի հնագույն կաֆաներով միայն*։

Ինչ վերաբերում է նրա տաղերին, յերկրորդական են նրանք բովանդակության, բանաստեղծական հղացման, պատկերավորման և զգացմունքի արտահայտության կողմից, շատ անգամ և բոնազրոսիկ։ Համեմատաբար լավ են «Տաղ վարդին եւ բլբուլին» վերնագրով հատվածները, վոր նմանողություն են Աղթամարցուն մտքի, ձևի և հաճախ արտահայտության կողմից։ Գեղարվեստականից ավելի նրանք ունին գրական-պատմական արժեք։

Ավելի բարձր է Զաքարիան վորպես գրիչ և նկարիչ. նորա շարականի գրչությունը ու նկարչությունը կարելի յե մինչև իսկ աղնիվ համարել, մանավանդ լուսանցքի փոքր զարդերն ու պատկերները, մանրանկարչական տառերի հետ։ Ինչպես յերևում է նա 1544 թվի Աղեքսանդրի պատմությունից կամ 1549 թվի ավետարանից հետո, յերկար ժամանակ զբաղվել է գրչությամբ և մանրանկարչությամբ, հետզհետե ավելի հմտություն և ճարտարություն ձեռք բերելով։ Արվեստի հատկության կողմից միմյանց մոտ են վերոհիշյալ ավետարանն ու Աղեքսանդրի պատմությունը, հատակները յերկար, այտերը նիհար, յերկարավուն և փոս ընկած, մարմնի կազմության և համաչափության թույլ հասկացողությամբ. բայց նրանք տարբեր արժեքներ են ըստ բովանդակության. մինչդեռ ավետարանի մնորինականները առանձին նորություն չեն բերում հայ արվեստի պատմության համար իբրև սովորական յերևույթ, Աղեքսանդրի պատմության նկարչությունը գնահատելի պիտի համարել յուր աշխարհիկ բովանդակությամբ, ճոխ և բազմատեսակ պատկերագրությամբ, շարլոնականից դատ նաև ժամանակակից հագուստով, զենքերով, յերաժշտական և այլ գործիքներով, կահկարասիքով և այլն։ Հարց է, թե վորքան ինքնուրույն է Զաքարիան այստեղ. Հովասափի և Զաքարիայի նկարչության մասին հաստատ ասել կարող ենք, վոր նոքա իրար հետ կապ չունին մեր ձեռքի տակ յեղած լուսանկարներից դատելով, իսկ Աղթամարցու և Զաքարիայի մասին կարծիք հայտնել կարող չենք միայն հիշողության վրա հիմնված. լուսանկար ել չունինք. բայց Աղթամարցու ուրիշ նկարներից դատելով, ուսուցչի արվեստը ավելի բարձր է**։

Տարբեր և նաև Եջմ.-ի № 782 Ն. Ց. ձեռագրից, վոր ճոխ նկարազարդված է վոմն Հակոբ Զուղայեցու կողմից, թեև ընագիրը զաքարյան խմբագրության է պատկանում և գրված պիտի լինի ԺԶ. դարու կեսերին*, ուրեմն և Զաքարիայից վոչ շատ ուշ։ Սակայն նախնական ավանդների ազդեցության ապացույցներ նկատելի յեն Զաքարիայի վրա, նույն իսկ մեր ձեռքի տակ յեղած փոքր չափով նյութերի համեմատությամբ։

Դարեհի դեսպանները Աղեսանդրի առաջ. Մանչեստրի ձեռագրից.
Պատկեր 106.

Մանրանկարներով զարդարված Աղեքսանդրի պատմության ձեռագիր ունինք ավելի վաղ ժամանակից, քան ԺԶ. դարը. Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 424, վոր ընագիր է ծառայել 1842 թվի հրատարակության, համարվում է ԺԳ. դարու գործ։ Նկարչության և գրչության մասին գաղափար ենք ստանում հ. Յերեմյանի «Գրական պատմութիւն և Գեղեցիկը» աշխատությունից**, ուր նմանահանությամբ մեջ են բերված հինգ յերես. գրիչը պիտի լինի վոմն Ներսես սարկավագ***, իսկ նկարիչը տարբեր, հավանորեն, յեթե բոլորգրով գրած բացատրությունները նկարչինն են[1]։

Ա՛րդ, համեմատելով Զաքարիայի մի քանի լուսանկարները 1544 թ. Աստվածատուր պատրիարքի համար գրած որինակից, տարաբաղդաբար միայն մեկն է ըստ բովանդակության համապատասխան հ. Յերեմյանի հրատարակած պատկերներին, առնված ձեռագրի էջ 94, Աղեքսանդր և Ստարագրաս քրմուհու մոտ. բայց այդ մեկն ել բավական է փոխառության իրողության հաստատության համար։ Զաքարիայի նկարի մեջ ևս անձանց դասավորությունը նույն է Վենետիկի ձեռագրի հետ. Աղեքսանդրը կանգնած է, գլու-

* Տես Արարատ. 1919. մեր հոդվածը, Գրիգորիս Աղթամարցի։ Իբրև նյութ ապագա ուսումնասիրության տալիս ենք Եջմ.-ի № 782 Ն. Ց. ձեռագրի լուսանցքների ցուցումները Զաքարիայի նկատմամբ, համեմատելով հ. հ. Տաշյանի և Ակինյանի հրատարակությունների հետ. Հավել. Գ. 2։

** Ձեռ. Եջմ. № 962 Մաշտոցի մեջ կան Գրիգորիսի չորս մեծ մանրանկարներ բովանդակության հետ կապված։

* Արարատ. 1919. 10. Մեր հոդվածը. Գրիգորիս Աղթամարցի։

** Վենետիկ. 1915. 178, 180։

*** Տաշեան. Սուտ Կալիսթենես. 87։

[1] Հ. Տաշյանի հետ մենք ել կասկածելի յենք համարում ձեռագրի այդքան վաղ ծագումը, բայց ավելի հին քան մեր յերեք բանաստեղծ նկարիչները, և վոչ ուշ քան ԺԵ. դարու առաջին կեսը։ Արդյոք նկարչության որինակի ծագումը մինչև կեչառեցին չի հասնում, ինչպես խմբագրությունը. Խաչատուր կեչառեցու այսպիսի աշխատության մասին անմիջական տեղեկություն չունինք, բայց անկարելի չե, քանի վոր նա յել գրիչ եր և նկարիչ, վոր կտեսնենք յուր տեղում։